Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ <<ՀՀ Արարատի մարզի Մարմարաշենի Անդրանիկ Բարությանի անվան միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ի <<Ֆիզկուլտուրա >> /26 դասաժամ/ , <<Պատմություն >> /28 դասաժամ/ և <<Տեխնոլոգիա>> /4 դասաժամ/ առարկաների առարկայի ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի թափուր տեղի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր ըստ ՀՀԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը ,որին հավակնում է /Ձև 1/
2. Փաստաթուղթ/ դիպլոմ/ <<Հանրակրթության մասին>>ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան կամ որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը
4. Ինքնակենսագրություն/Ձև 4/
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի , հավաստագրերի պատճենները / դրանց առկայության դեպքում/.
6. Մեկ լուսանկար 3×4 չափի.
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք:
8. Արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ.

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ-ի օգոստոսի 28-ից մինչև սեպտեմբերի 10-ը ներառյալ ամեն օր ժամը 9^{00}-ից 15^{00}-ը , բացի շաբաթ և կիրակի օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա՝ **2024թ-ի սեպտեմբերի 13 -ին , ժամը 14^{00}-ին** , Արարատի մարզի Մարմարաշենի Ա. Բարությանի անվան միջն. դպրոցում:

Հասցեն՝ Համայնք Մարմարաշեն ,Երևան- Արտաշատ խճուղի 71:

Տեղեկությունների համար զանգահարել 093-97-64-80 հեռախոսահամարով: